ՀՈԶԱԿԻՐ ՀԻՍՈՒՍԻ ԱՐՅՈՒՆԸ

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐ. Ա ՊԵՏՐՈՍ 1.1-2

1 Պետրոսը՝ Հիսուս Քրիստոսի առաքյալ՝ ընտրյալ պանդուխտներիդ, որ ցրված եք սփյուռքում՝ Պոնտոսում, Գաղատիայում, Կապադովկիայում, Ասիայում և Բյութանիայում՝ 2 ***<u>ընտրված</u>*** *ըստ Հայր Աստծու կանխագիտության, Հոգու* ***սրբացման*** *միջոցով՝ հնազանդության ու Հիսուս Քրիստոսի* ***արյամբ*** *սրսկման (sprinkled) համար: Շնորհն ու խաղաղությունը թող շատանան ձեզ վրա:*

- *Արյունը քեզ փրկեց, բայց պետք է հասկանաս, որ այն նաև քեզ պաշտպանում է:*
- *Հիսուսի անունը բերում է ազատագրում, իսկ Հիսուսի արյունը բերում է պաշտպանություն:*

ԱՂՈԹՔԻ ՄԵՋ ՀԻՍՈՒՍԻ ԱՐՅՈՒՆԸ ԿՈՉ ԱՆԵԼՆ՝ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԽՆԴՐԵԼ:

- ***Դա Աստծո կողմից դրված մի պատնեշ է, որը սատանան չի կարող անցնել:***
- ***Թշնամին չի կարող դիմակայել Հիսուսի անունին և Հիսուսի արյանը:***

  Հիսուսի արյունը կոչ անելն ամենաբարձր դատական դիմումն է: (Apeals Court)

ԻՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ՈՐԱԷ ՄԵԿԻ ՎՐԱ ՅԻՍՈՒՍԻ ԱՐՅՈՒՆԸ ԿՈՉ ԱՆԵԼ:

Դա ունի չորս նշանակություն, և ես ուզում եմ, որ դրանք գրի առնեք:

Դա նշանակում է՝

1. *Ես աղոթում եմ պաշտպանության համար:*
2. *Ես հավատում եմ ազատագրության համար:*
3. *Ես խնդրում եմ նոր սկիզբ:*
4. *Վկայություն որպես ապացույց Աստծո փառքի:*

*Ելից 12.12-14 – **12** Քանի որ այս գիշերը Եգիպտոսի երկրով անցնելու եմ և հարվածելու՝ եմ Եգիպտոսի երկրի բոլոր առաջնեկներին՝ թե՛ մարդկանց, թե՛ անասուններին. Եւ Եգիպտոսի բոլոր աստվածների դեմ դատաստան եմ տեսնելու. Ես Եմ Տերը: Եվ **Արյունը ձեզ համար նշան** թող լինի տների վրա, որտեղ դուք եք, և երբ արյունը՝ տեսնեմ ձեր վրայից կանցնեմ, և հարվածը ձեզ վրա չի գա՝ ձեզ կործանելու համար, երբ հարվածեմ Եգիպտոսի երկրին: **14** Եվ այն օրը ձեզ համար հիշարժան թող լինի, և ձեր բոլոր սերունդների մեջ տոնեցեք այն որպես ՏԻՐՈՋ օրը:*

- *Ես միշտ մտածել եմ այս մասին և այս հարցը տվել եմ ինձ՝ կարդալով Ելից գիրքը: Եթե սա է այն պատուհասը, որը կոտրում է կապանքները և վերջապես ստիպում է փարավոնին ասել. «Այսքան տարիների ստրկությունից հետո ես ազատ եմ արձակելու ժողովրդին», ապա ինչո՞ւ սպասել մինչև տասներորդը:*

Ինչո՞ւ անցնել ինը այլ պատուհասների միջով:

Ելից 7.3 – 3 Բայց ես կխստացնեմ փարավոնի սիրտը և իմ նշաններն ու հրաշքները կշատացնեմ Եգիպտոսի երկրում: 4 Փարավոնը ձեզ չի լսի. և ես իմ ձեռքը կդնեմ Եգիպտոսի վրա և իմ զորքերը՝ բերեմ իմ ժողովրդին, Իսրայելի որդիներին, նրանց միջից մեծ դատաստաններով հանելու համար: 5 Եվ եգիպտացիները կիմանան, որ ԵՍ ԵՄ ՏԵՐԸ, երբ Ես ձեռքս Եգիպտոսի վրա մեկնեմ ու Իսրայելի զավակներին նրանց միջից դուրս հանեմ:

- *Եգիպտոսի որոշ շրջաններում աստվածները տարբեր անուններ ունեին:*

- *Պատուհասները սկսվում են արյունով և ավարտվում են արյունով:*

- ***Առաջին պատուհասը դատաստան էր Եգիպտոսի վրա, իսկ վերջին պատուհասը պաշտպանություն էր Աստծո ժողովրդի համար:***

Ելից 7.19 – Տերն ասաց Մովսեսին. Ասա՛ Ահարոնին. Մ՛ռ գավազանդ և ձեռքդ մեկնի՛ր եգիպտացիների ջրերի վրա՝ նրանց առուների վրա, նրանց գետերի վրա, նրանց լճերի վրա, նրանց բոլոր ջրամբարների վրա, և ***արյուն կդառնան.*** *Եգիպտոսի ամբողջ երկրում փայտե և քարե ամանների մեջ եղած ջրերը արյուն կդառնան:*

- *Հիշե՛ք սա. Կանայում գինու ջուր դառնալը խորհրդանշում է այն ջուրը, որը խաչի վրա Հիսուսի կողքից հոսեց՝ դատաստան աշխարհի համար և փրկություն Նրա զավակների համար:*

David Wilkerson իր քարոզներից մեկում ասել է.

«Պարզապես պատկերացրե՛ք՝ կարո՞ղ եք տեսնել երկու տներ՝ կողք կողքի: Մեկ տանը Գառան արյունը քսված էր դռների սյուներին, և այնտեղ տոնում էին Զատկի տոնը: Իսկ եգիպտացիները չէին քսել գառան արյունը իրենց դռների վրա, սակայն Իսրայելի տան երեխաները լսում էին Եգիպտոսի տներից հնչող աղաղակը և անհանգստանում:

Իսրայելի տունը կարելի է համեմատել նոր հավատացյալի հետ, ով միայն վերջերս է ընդունել Քրիստոսին և դեռ լիովին չի հասկանում արյան զորությունը:

«Եվ ապա David Wilkerson-ը ասաց, որ թեև Իսրայելի տան մեջ կային կասկածներ, վախեր և անհանգստություններ, նրանք պաշտպանված էին: Դա Հիսուս Քրիստոսի արյունն է, որը մեզ ազատել է»:

ՉՈՐՍ ԲԱՆ, ՈՐ ԳԱՌԱՆ ԱՐՅՈՒՆԸ ԱՐԵՑ ԱՍՏԾՈ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԱՄԱՐ:

1. Պաշտպանություն

*Ելից 12.23 – Եվ Տերն եգիպտացիներին հարվածելու համար անցնելու է և երբ դռան վրա սեմի և երկու դրանդիների վրա **արյուն տեսնի**, այդ ժամանակ Տերն այդ դռան վրայից կանցնի և չի թողնի սպանողին, որ ձեր տները մտնի ձեզ հարվածելու համար:*

Մարտին Լյութերի Պատմությունը Հիսուսի արյան մասին

2. Ազատագրություն

*Ելից 12.31 – Եվ Փարավոնը նույն գիշերը կանչեց Մովսեսին ու Ահարոնին և ասաց. Վեր կացեք **դո՛ւրս ելեք** իմ ժողովրդի միջից դուք էլ, Իսրայելի որդիներն էլ. **գնացեք պաշտե՛ք Տիրոջը**, ինչպես որ ասացիք:*

3. Նոր Սկիզբ

Ելից 12.1 – Տերը Եգիպտոսի երկրում խոսեց Մովսեսի և Ահարոնի հետ՝ ասելով. ‚Այս ամիսը թող ձեզ համար լինի ամիսների սկիզբը. այն ձեզ համար թող լինի տարվա ամիսների առաջինը:

Ջոն Ուեսլիի պատմությունը հանցագործ գողի մասին և Հիսուսի արյան:

4. Վկայություն

*Ելից 12.26-27 – **26** Եվ երբ պատահի, որ ձեր որդիները հարցնեն ձեզ. Ի՞նչ է նշանակում ձեր այս պաշտամունքը, **27** այն ժամանակ կպատասխանեք, որ սա զատկի զոհն է Տիրոջ համար, որը Եգիպտոսում Իսրայելի որդիների տների վրայով անցավ եգիպտացիներին հարվածելիս և **ազատեց մեր տները**: Ժողովուրդը խոնարհվեց ու երկրպագություն արեց:*

ՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ 12-ՐԴ ԳԼԽԸ ԱՐՅԱՆ ԶՈՐՈՒԹՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ Է:

- *Սատանան հարձակվում է.*

*Հայտնություն 12.11 – Եվ նրանք հաղթեցին նրան **Գառան արյունով** ու իրենց վկայության խոսքով և իրենց կյանքը չսիրեցին մինչև մահ:*

Այս տողը չես կարող մեջբերել առանց ուշադրություն դարձնելու նախորդ երկու տողերին.

*Հայտ. 12.9-10 – Եվ ցած գցվեց **մեծ վիշապը՝ առաջին օձը**, որ **դև** և **սատանա է** կոչվում. ամբողջ աշխարհը մոլորեցնողը երկրի վրա ընկավ, և նրա հրեշտակներն էլ նրա հետ ընկան: Եվ երկնքից ուժեղ ձայն լսեցի, որ ասում էր. Այժմ*

*եղավ մեր Աստծու փրկությունը, զորությունն ու թագավորությունը, իշխանությունը նրա Օծյալի, որովհետև ընկավ մեր **եղբայրների դեմ չարախոսը**, որ գիշերուզօր մեր Աստծու առաջ չարախոսում էր նրանց մասին:*

- ***Յովհաննեսը խոսում է այն հոգևոր պատերազմի մասին, որի մեջ մենք կանգնած ենք: Նա նշում է հինգ անուն:***

  Մեծ վիշապը, առաջին օձը, դևը, սատանան, եղբայրների դեմ չարախոսը:

  Եսայի 59.19 – Եթե թշնամին հեղեղի պես գա, Տիրոջ Հոգին դրոշ (statndard) պիտի բարձրացնի նրա դեմ:

- ***Ի՞նչ է այդ ստանդարտը: Ի՞նչն է այն չափանիշը, որ Աստված բարձրացնում է թշնամու դեմ:***

- ***Դա Հիսուսի արյունն է:***

  Ա Յովհ. 1.9 – Իսկ եթե մեր մեղքերը խոստովանենք, ՆԱ ՀԱՎԱՏԱՐԻՄ Է ու ԱՐԴԱՐ՝ մեր մեղքերը ներելու մեզ և մաքրելու մեզ ամեն անիրավությունից:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ